կ'ընդօրինակէ Սարգիս ձառերը (ՄՁ. Թ. 574), որուն յիշատակարանին համաձայն, Ստեփանոս գրչին հօրը անունն է Մեհեան, մօրը Սիրամարգ։ ԵՒ ուր կը յիշատակուի Կարապետ վրդ. վերաշինողը Ս. Փրկչի վանքին և իր օգնականը Սարգիս մեհնակեաց (Խապ. Ցուց. տեսր. Ծ. էջ 3839).

Դարձեալ միևնոյն գրիչն է որ Սարգիս մխայնակեցին համար, ՊԹ. (=1360) թուին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Նարեկ, Վարք Հարանց և Ցս. Որդի գիրքերը (ՄՁ. Թ. 1614), սոյն ձեռագրինմէջ կայ նաև ծանօթագրութիւն մը. ընդ նմին յիշեցէք եւ զԱստուածատուր կրօնաւորս, որ զՆարեկացին գրեցի եւ ծաղկեցի (Խապ. Ցուց. տեսր. ԺԹ. էջ 2192—3)։

ՍՏԵՓԱՆ ՊԵ.— (758—774). (Ցպե. էջ 34)։

ՍՏԵՓԱՆ ՍՊԷՆԴՈՎԱԿՈՒ ԵՒ ԴՈՒՍՏՐՆ ՀՌԻՓՍԻՄԷ, ԼԵՀԱՀԱՑ.— 1648ին Ստեփան Սպէնդովակու Հայաստանէն գաղթած էր Եպզլովցիա ուր կը կարգուի ցկեանս վրդ (կառավարիչ). 1676ին կ'ստանայ Լեհ ազնուականութեան տիտղոսը. Սպէնդովակու մեծ քաջութիւն ցոյց կուտայ թաթարներու արշաւանքին ժամանակ, բայց անոնց գօրաւոր ուժին առջև տեղի կուտայ և թաթարները կը գրաւեն Եպզլովցիան. տեղւոյն Հայերը կը ցրուին և Սպէնդովակու ալ ճարահատ՝ կը մեկնի Երուսաղէմ, և բերել կուտայ իր կինն ու Հռիփսիմէ անուն աղջիկը, որ կը նուիրուի Քրիստոսի Ս. Գերեզմանին ծառայութեան և կ'ուխտէ կոյս մնալ ցկեանս. Ստեփան կը վախճանի Երուսաղէմի մէջ, իսկ Հռիփսիմէ մօրը հետ կը վերադառնայ Եպզլովցիա. և հոն կը ձեռնադրուի սարկաւագուհի (Արարատ, 1902, էջ 296—97).

ՍՏԵՓԱՆ ՎՐԴ. ԳԱՍԱՊԱՑԻ.— Մբ. 1862ին։

ՍՏԵՓԱՆ ՎՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ, ԷՏԻՐՆԵՑԻ.— Մբ. միաբան կ'արձանագրուի 1841ին. Ձռ. 1747ին. ՏՌ. 1857ին. ժամարար 1861ին։

ՍՏԵՓԱՆ ՎՐԴ. ԷՐԶՐՈՒՄՑԻ.— Մբ. փոխանորդ. կը վախճանի 1807ին։

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ԹԵԼԼԷ, ՄԱՐԱՇՑԻ.— Մբ. Նբ. Երու-